




***Ռուսաստանի կողմից Հայաստանին նվիրաբերվել են շարժական բուժախտորոշիչ կլինիկաներ***

# ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԸ

***Կլինիկաները կարող են շահագործվել կլիմայական և աշխարհագրական ցանկացած պայմաններում՝ ապահովելով բարձր հարմարավետություն բժշկական անձնակազմի և այցելուների համար***






***Կլինիկաների շնորհիվ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը հասանելի է դարձել բազմաթիվ քաղաքային և գյուղական բնակավայրերում***

***Շարժական կլինիկաների բազայի վրա միգրանտներին ու նրանց ընտանիքների անդամներին, ընդհանուր բնակչությանն անվճար հիմունքներով տրամադրվում են ՄԻԱՎ վարակին առնչվող բժշկական ծառայություններ՝ պահպանելով կամավորության ու գաղտնիության սկզբունքները***

***Կլինիկաների հնարավորություններն օգտագործվում են հանրային տարբեր միջոցառումների ժամանակ***






***Շարժական կլինիկաներում տրամադրվող ծառայությունների թվում են՝ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունն ու խորհրդատվությունը, վիրուսային հեպատիտներ Բ-ի և Ց-ի, սիֆիլիսի վերաբերյալ հետազոտությունները, բժշկական խորհրդատվությունը, ուլտրաձայնային հետազոտությունները, ինչպես նաև տուբերկուլոզի նկատմամբ կարգավիճակի գնահատումը և անհրաժեշտության դեպքում՝ ուղեգրումը***









«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Աճառյան 2 Հեռ.՝ (+37410) 610730, (+37410) 617107
Ֆաքս՝ (+37410) 615746 «Վստահության հեռախոս»՝ (+37410) 610820
Էլ.փոստ՝ armaids@armaids.am Կայք՝ www.armaids.am